



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարան,  
նախագահող դատավոր՝ Տ.Սիմոնյան

2024 թվականի դեկտեմբերի 3-ին

քաղաք Երևանում

ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն  
հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ  
դատարան),

նախագահությամբ՝  
մասնակցությամբ դատավորներ՝

Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ  
Ռ.ՄԻՒԹԱՐՅԱՆԻ  
Ս.ՉԻՉՈՅԱՆԻ  
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի  
(այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2022 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ

մեղադրյալ Մուրադ Մարութի Հարությունյանի պաշտպաններ Կ.Մեծլումյանի և Է.Բեգլարյանի վճարել են բողոքը<sup>1</sup>,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **Գործի դատավարական նախապատմությունը.**

1. 2020 թվականի հունիսի 29-ին ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 37154520 քրեական գործը:

2020 թվականի օգոստոսի 12-ին Մուրադ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը մեղադրյալ Մ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է 9.500.000 ՀՀ դրամ գումարի չափով գրավը:

2020 թվականի օգոստոսի 15-ին ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նախաքննության մարմնի կողմից մեղադրյալ Մ.Հարությունյանի նկատմամբ կիրառված 9.500.000 ՀՀ դրամի չափով գրավը նվազեցվել է, և գրավի չափ է սահմանվել 4.500.000 ՀՀ դրամը:

2. 2021 թվականի հուլիսի 2-ին ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 37157821 քրեական գործը:

3. 2021 թվականի հուլիսի 4-ին ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Գ.Վիրաբյանի որոշմամբ թիվ 37154520 քրեական գործը միացվել է թիվ 37157821 քրեական գործին, և նախաքննությունը շարունակվել է 37157821 համարի ներքո:

2021 թվականի հուլիսի 5-ին Մուրադ Հարությունյանին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

<sup>1</sup> Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

4. 2021 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Կ.Կարապետյանի (այսուհետ նաև՝ Դատախազ) միջնորդությունը՝ թիվ 37157821 քրեական գործով մեղադրյալ Մ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը պետության եկամուտ դարձնելու վերաբերյալ, ըստ ընդդատության ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

5. 2021 թվականի դեկտեմբերի 14-ին Առաջին ատյանի դատարանի որոշմամբ Դատախազի միջնորդությունը մերժվել է:

6. ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Ն.Մովսիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 17-ի որոշմամբ բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը բեկանվել և փոփոխվել է՝ մեղադրյալ Մ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված 4.500.000 ՀՀ դրամի չափով գրավը դարձնելով պետության եկամուտ:

7. Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ մեղադրյալ Մ.Հարությունյանի պաշտպաններ Կ.Մեժլումյանը և Է.Բեգլարյանը վճռաբեկ բողոք են բերել, որը վճռաբեկ դատարանի 2022 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2023 թվականի հունվարի 16-ին գործը բաշխվել (հանձնվել) է ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմին:

7.1. Վճռաբեկ դատարանի 2024 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերները գտել են, որ Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, այն է՝ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի պահանջը: Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար:

8.1. Բողոքի հեղինակները գտել են, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն առ այն, որ Մ.Հարությունյանը կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք, ըստ էության խախտում է Մ.Հարությունյանի անմեղության կանխավարկածը, քանի որ «քրեական օրենքով չթույլատրված արարք» կատարելը և «հանցանք» կատարելը նույնական են, և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն բխում ՀՀ քրեական օրենսգրքի նորմերից:

9. Բողոքաբերները նշել են, որ առկա է նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովման և իրավունքի զարգացման խնդիր, քանի որ թիվ ԵԴ/1098/01/19 քրեական գործով դատարանը արձանագրել է, որ անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելը կարող է հաստատվել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում՝ մերժելով այդ հիմքով գրավի գումարը պետականացնելը, իսկ թիվ ՄԴ1/0056/01/21 գործով դատարանն, առանց օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության, որոշել է գրավի գումարը պետականացնել:

10. Վերոգրյալից ելնելով՝ բողոքաբերները խնդրել են բեկանել Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 17-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին աստիճանի դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշումը:

**Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.**

11. Մուրադ Մարութի Հարությունյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ. «[Նա] հանդիսանալով «Հայանրատ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Վայոց ձորի անրատնտեսություն» մասնաձյուղի տնօրեն, օժտված լինելով կազմակերպական-տնօրինչական գործառույթներով և համաձայն 2005 թվականի սեպտեմբերի 12-ին գործարու՝ «Հայանրատ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված թիվ 18 պայմանագրի և այդ պայմանագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին 2007 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված համաձայնագրի, «Վայոց ձորի անրատնտեսություն» մասնաձյուղում իրականացնելով մասնաձյուղի ընթացիկ գործունեության կազմակերպում և ղեկավարում, կրելով պարասիսանարվություն գործարուի հանձնարարությունների և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պարզաձ կատարելու համար, կատարելով աշխատանքի բաշխում աշխատողների միջև, պարտավոր լինելով մասնաձյուղի ընթացիկ ղեկավարումը պարզաձ մակարդակով իրականացնելու մասնաձյուղի կանոնադրության և կնքված պայմանագրին համապարասիսան, իրեն վարահված մասնաձյուղի միջոցներից հափշտակություն կատարելու միասնական դիրավորությամբ, 2016 թվականի հունվարի 1-ից 2020 թվականի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում, շարունակարար վարնելու եղանակով հափշտակել է «Հայանրատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պարկանող, առանձնապես խոշոր չափերով՝ 11.476.359 ՀՀ դրամ գումարը, ինչն արտահայտվել է հերկյալում.

Մուրադ Հարությունյանը, 2005 թվականի սեպտեմբերի 12-ից լինելով «Հայանրատ» ՊՈԱ կազմակերպության «Եղեգիսի անրատնտեսություն» մասնաձյուղի, այնուհետև 2007 թվականի հոկտեմբերի 1-ի համաձայնագրով նույն ՊՈԱ կազմակերպության «Վայոց ձորի անրատնտեսություն» մասնաձյուղի տնօրեն, ունենալով հափշտակություն կատարելու

միասնական դիրավորություն, անձնական և այլ շահագրգռվածությունից ելնելով, միջնորդել է «Հայանյութ» ՊՈԱ կազմակերպության փնտրիչությանն իր կնոջը՝ Մարինե Վեմիրի Հարությունյանին, ընդունել աշխատանքի «Վայոց ձորի անտառփնտրություն» մասնաձյուղում որպես պահակ, ով 2008 թվականի սեպտեմբերի 3-ին ՊՈԱ կազմակերպության փնտրիչի թիվ 174-Ա հրամանով հրամանագրվել է նշված մասնաձյուղում որպես պահակ ու նույն օրը նրա հետ կնքվել է աշխատանքային թիվ 3729 պայմանագիրը, սակայն 2016 թվականի հունվարի ամիսից մինչև 2018 թվականի հուլիսի ամիսը ներառյալ փաստացի աշխատանքի չներկայանալու և պայմանագրով նախատեսված աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում նրա փոխարինողները են կազմակերպության աշխատավարձերի ցուցակներում ու նշված ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր ամիս, շարունակաբար կազմակերպության միջոցներից նրան վճարվել է ընդհանուր 1.690.525 ՀՀ դրամ գումար:

Այնուհետև, Մուրադ Հարությունյանը միջնորդել է «Հայանյութ» ՊՈԱ կազմակերպության փնտրիչությանն իր ընկերոջ որդուն՝ Ալիկ Զավենի Մաթևոսյանին, «Վայոց ձորի անտառփնտրություն» մասնաձյուղում ընդունել աշխատանքի որպես վարորդ, ով 2009 թվականի մարտի 11-ին ՊՈԱ կազմակերպության փնտրիչի թիվ 31-Ա հրամանով հրամանագրվել է մասնաձյուղում որպես վարորդ ու նույն օրը նրա հետ կնքվել է աշխատանքային թիվ 4043 պայմանագիրը, սակայն 2016 թվականի հունվար ամիսից մինչև 2020 թվականի հունիս ամիսը փաստացի աշխատանքի չներկայանալու և պայմանագրով նախատեսված աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում նրա փոխարինողները են կազմակերպության աշխատավարձերի ցուցակներում ու նշված ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր ամիս, շարունակաբար կազմակերպության միջոցներից նրան վճարվել է ընդհանուր 3.109.920 ՀՀ դրամ գումար:

Այնուհետև, Մուրադ Հարությունյանը միջնորդել է «Հայանյութ» ՊՈԱ կազմակերպության փնտրիչությանն իր հարազատ եղբորը՝ Վոլոդյա Մարութի Հարությունյանին, ընդունել աշխատանքի «Վայոց ձորի անտառփնտրություն» մասնաձյուղում որպես Արտավանի անտառապեղծության թիվ 2 պահապաժնի

անրատուապահ, ով 2010 թվականի հունիսի 22-ին ՊՈԱ կազմակերպության փնտրման թիվ 392-Ա հրամանով հրամանագրվել է մասնաճյուղում որպես Արտավանի անրատուապետության թիվ 2 պահաբաժնի անրատուապահ ու նույն օրը նրա հետ կնքվել է աշխատանքային թիվ 6193 պայմանագիրը, սակայն 2016 թվականի հունվար ամսից մինչև 2019 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ փաստացի աշխատանքի չներկայանալու և պայմանագրով նախատեսված աշխատանքային պարտականությունները չկատարելու պայմաններում նրա փյալները ներառվել են կազմակերպության աշխատավարձերի ցուցակներում ու նշված ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր ամիս, շարունակաբար կազմակերպության միջոցներից նրան վճարվել է ընդհանուր 3.265.684 ՀՀ դրամ գումար:

Այնուհետև, Մուրադ Հարությունյանը միջնորդել է «Հայանրատ» ՊՈԱ կազմակերպության փնտրման իր հարազատ եղբոր փեսային՝ Սիրաս Հեկտորի Հարությունյանին ընդունել աշխատանքի «Վայոց ձորի անրատուապետություն» մասնաճյուղում որպես անրատուային տեխնիկ, ով 2014 թվականի օգոստոսի 1-ին ՊՈԱ կազմակերպության փնտրման թիվ 374-Ա հրամանով հրամանագրվել է մասնաճյուղում որպես անրատուային տեխնիկ, սակայն 2015 թվականի հունվար ամսից մինչև 2016 թվականի օգոստոս ամիսը ներառյալ փաստացի աշխատանքի չներկայանալու և աշխատանքի ընդունման հրամանով նախատեսված գործառնության պարտականությունները չկատարելու պայմաններում նրա փյալները ներառվել են կազմակերպության աշխատավարձերի ցուցակներում ու նշված ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր ամիս, շարունակաբար կազմակերպության միջոցներից նրան վճարվել է ընդհանուր 1.721.550 ՀՀ դրամ գումար:

Շարունակելով իր հանցավոր գործունեությունը՝ Մուրադ Հարությունյանը միջնորդել է «Հայանրատ» ՊՈԱ կազմակերպության փնտրման իր ծանոթ Գևորգ Զաքարի Ավերիսյանին ընդունել աշխատանքի «Վայոց ձորի անրատուապետություն» մասնաճյուղում որպես Արենիի անրատուապետության թիվ 5 պահաբաժնի անրատուապահ, ով 2013 թվականի սեպտեմբերի 10-ին ՊՈԱ կազմակերպության փնտրման թիվ 527-Ա հրամանով հրամանագրվել է մասնաճյուղում որպես թիվ 5 պահաբաժնի անրատուապահ, սակայն 2019

թվականի հունվարի ամսից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 11-ը ներառյալ ժամանակահատվածում փաստացի աշխատանքի չներկայանալու և աշխատանքի ընդունման հրամանով նախատեսված գործառնության պարտականությունները չկատարելու պայմաններում նրա փոխարիները ներառվել են կազմակերպության աշխատավարձերի ցուցակներում ու նշված ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր ամիս, շարունակաբար կազմակերպության միջոցներից նրան վճարվել է ընդհանուր 1.688.550 ՀՀ դրամ գումար:

Այսպիսով Մուրադ Հարությունյանը վարման եղանակով հափշտակել է «Հայանյառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող առանձնապես խոշոր չափերով, ընդհանուր՝ 11.4765.359 ՀՀ դրամ գումարը:

Բացի այդ, Մուրադ Հարությունյանն իր ենթակայության ներքո աշխատող Արմեն Պարույրի Բարսյանի հետ նախապես՝ մինչև հանցագործությունը սկսելը, պայմանավորվել է հանցանքը՝ ամբողջովին արգելված կենդանու՝ բեզուարյան այծի որսը համարելի կատարելու մասին, իր կողմից վարած «Ռազ» մակնիշի 609 LL 62 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով 2021 թվականի հուլիսի 2-ի, քննությամբ չպարզված ժամին գնացել են Արենի համայնքի Ելփին բնակավայրի «Արդարազ» կոչվող տեղամաս, որտեղ Արմեն Բարսյանն իրեն պատկանող «Իժ» մոդելի 16մմ տրամաչափի 19503-59 գործարանային համարով երկփողանի հրացանից երկու կրակոցի միջոցով սպորինի որսացել է բնական ազատության վիճակում գտնվող որսն ամբողջովին արգելված մեկ հար բեզուարյան այծ՝ կենդանական աշխարհին պատճառելով խոշոր չափերով՝ 3.000.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Այսօրինի որս հանդիսացող բեզուարյան այծի լեշն իր վարած «Ռազ» մակնիշի 609 LL 62 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով «Արդարազ» կոչվող տեղամասից տեղափոխելիս հասնելով Ելփին բնակավայրի «Զաղա» կոչվող տեղամաս, նկատել է ոստիկանության ծառայողներին և, զգալով բացահայտման իրական վտանգ չի ենթարկվել վերջիններիս կողմից իրեն ուղղված՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու օրինական պահանջին, դիմել է փախուստի և, հասնելով նույն բնակավայրի «Քարի տակ» կոչվող



յրեղամասում գրնվող, Ելփին բնակավայրի բնակչուհի Քանաքարա Միքայելյանին պատկանող հողամասի մուր բեզոարյան այծի լեշն ավրումեքենայից ներել են հարակից առուն, որը հայտնաբերվել է նշյալ վայրում ոստիկանության ծառայողների կողմից ու վերցվել:»<sup>2</sup>:

12. 2021 թվականի նոյեմբերի 18-ին Դատախազի կողմից ներկայացված միջնորդության համաձայն՝ «(...) Եկարի ունենալով այն, որ Մուրադ Հարությունյանը դատարանի կողմից 15.08.2020թ. իր նկարմամբ որպես խափանման միջոց գրավը կիրառված լինելու պայմաններում 02.07.2021թ. առերևույթ կատարել է նոր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանք, այն է՝ խախտել է ընտրված խափանման միջոցի պայմանները, չի դրսևորել պատշաճ վարքագիծ, 06.07.2021թ Վայոց ձորի մարզի դատախազությունում որոշում է կայացվել թիվ 37157821 քրեական գործով մեղադրյալ Մուրադ Մարութի Հարությունյանի նկարմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը վերացնելու մասին:

Նույն օրը՝ 06.07.2021թ.-ին, վարույթն իրականացնող քննիչի կողմից միջնորդություն է հարցուցվել ՀՀ Արարարի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Մ.Հարությունյանի նկարմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ, որը դատարանի 07.07.2021թ. որոշմամբ բավարարվել է:

Դատարանի որոշմամբ պաշտպանական կողմի ներկայացրած բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22.07.2021թ. որոշմամբ մերժվել է: (...)»<sup>3</sup>:

13. Առաջին ատյանի դատարանի՝ խափանման միջոց գրավը պետության եկամուտ դարձնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելու մասին 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանն արձանագրում է, որ Մուրադ Հարությունյանը դատարանի կողմից 15.08.2020թ. իր նկարմամբ որպես խափանման միջոց գրավը կիրառված լինելու պայմաններում 02.07.2021թ. առերևույթ կատարել է նոր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանք, սակայն մեղադրյալ Մ.Հարությունյանի կողմից փվյալ արարքը կատարելու վերաբերյալ

<sup>2</sup> Տե՛ս գործի նյութեր, թերթեր 38-39:

<sup>3</sup> Տե՛ս գործի նյութեր, թերթեր 2-4:

առկա չէ օրինական ուժի մեջ մտնող միասնական դատարանի, ուստի վերը նշված իրավակարգավորումների, այդ թվում նաև՝ ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 143-րդ հոդվածի 8-րդ մասի լույսի ներքո մեղադրյալի կողմից չթույլատրված արարքի կատարումը չի կարող համարվել հաստատված հանգամանք կամ փաստ, քանի որ այդ պարագայում կհասկարվի անձի անմեղության կանխավարկածը, մինչդեռ անձի կողմից չթույլատրված արարքի կատարելը կարող է հաստատված համարվել միայն օրինական ուժի մեջ մտնող դատարանի առկայության պայմաններում: Դատարանն ընդունելի է համարում պաշտպանական կողմի ներկայացված մտրեցումն առ այն, որ մինչդեռ փաստական վարույթի կամ դատական քննության ընթացքում գրավը կարող է պետության եկամուտ դարձվել ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված բոլոր հիմքերի դեպքում, բացի քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելու դեպքում՝ օրինական ուժի մեջ մտնող դատարանի բացակայության պայմաններում:

Ելնելով վերոգրյալից Դատարանը գտնում է, որ Մ.Հարությունյանի կողմից մուծված գրավը պետք է թողնել ՀՀ դատախազության դեպոզիտ հաշվին, մինչև միջնորդության մեջ նշված նոր ենթադրյալ հանցանքի վերաբերյալ վերջնական դատարանական ակտի ուժի մեջ մտնելը: (...)»<sup>4</sup>:

14. Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 17-ի որոշման համաձայն՝ «(...) Հարկ է փաստել, որ Առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը յուրովի է մեկնաբանել ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի դրույթները, կատարել է եզրահանգումներ, որոնք ամենևին չեն բխում օրենսդրական կարգավորումներից, անհիմն կերպով ինքնուրույն դիֆերենցել, փարանջարել է ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի հոդված 135-ով նախատեսված խափանման միջոց կիրառելու հիմքերը այն համարեքարում, որ դրանք ընդունելի են գրավը պետության եկամուտ դարձնելու առումով, բացառությամբ մեկ հիմքից, այն է՝ քրեական օրենքով չթույլատրված նոր արարք կատարելը: Այս մտրեցումն ընդունելի չէ և չի բխում խափանման միջոցների

<sup>4</sup> Տե՛ս գործի նյութեր, հատոր 1, թերթ 25-33:

հասկացությունից, էությունից, դրանց կիրառման պայմաններից և հիմքերից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Եթե կասկածյալը կամ մեղադրյալը կարարել է սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, ապա գրավը պետության եկամուտ է դարձվում դատարանի որոշմամբ՝ դատախազի միջնորդության հիման վրա, իսկ քրեական գործը դատարանում քննելիս՝ նաև դատարանի նախաձեռնությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան»: Այս դրույթի վերլուծությունից ակնհայտ է, որ օրենքը որևէ փարբերակում չի նախատեսում հոդված 135-ի 1-ին մասով նախատեսված արարքների միջև և դրանցից ցանկացածը կարարելու պարագայում գրավը պետության եկամուտ է դարձվում դատարանի որոշմամբ՝ դատախազի միջնորդության հիման վրա: Այդ դրույթն իմպերատիվ է և ենթակա չէ փարամեկնարանությունների: Բացի դա՝ հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 135-ի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է՝ «կարարել քրեական օրենքով չթույլատրված արարք» ձևակերպումը: Այս դրույթն ամենևին պարահական չէ, քանզի օրենսդիրը նշել է ոչ թե անձի կողմից հանցանք կարարելու մասին, որպիսի հանգամանքը կարող է փաստվել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճռով, այլ կիրառել է «քրեական օրենքով չթույլատրված արարք» ձևակերպումը, որը երբևէ չպետք է նույնացվի «հանցանք» կամ «հանցագործություն» հասկացությունների հետ: Հանցանքը՝ միմյանց հետ փոխկապակցված չորս փարբերի համադրություն է, իսկ հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշ հանդիսացող արարքի նշումը չի կարող նույնանալ հանցակազմի բոլոր փարբերի և հարկանիշների առկայության հետ: Այս համարեքարում՝ առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի մոտեցումը իրավաչափ համարվել չի կարող և խաթարում է քննարկվող խափանման միջոցի կիրառման և մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու պարագայում՝ համապարասխան բացասական հետևանքների առաջացման ինստիտուտի էությունը և բովանդակությունը (...)»<sup>5</sup>:

<sup>5</sup> Տե՛ս գործի նյութեր, հատոր 2, թերթեր 22-34:

**Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

16. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք օրինական ուժի մեջ մտած համապատասխան դատական ակտի բացակայության պայմաններում մեղադրյալի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հիմքով գրավը պետության եկամուտ դարձնելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունը:

17. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:*

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:*

17.1. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանման շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- անմեղության կանխավարկածի խախտում է այն դեպքը, երբ դատական որոշման կամ պաշտոնատար անձի կողմից արված հայտարարության մեջ կարծիք է արտահայտվում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղքի վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով<sup>6</sup>,

- անմեղության կանխավարկածը որպես քրեական գործի վարույթի դատավարական երաշխիք, ի թիվս այլնի, որոշակի պահանջներ է սահմանում՝ կապված դատական իշխանության մարմինների կամ այլ հանրային պաշտոնատար անձանց կողմից կասկածյալի (մեղադրյալի, ամբաստանյալի) մեղավորության վերաբերյալ կանխակալ

<sup>6</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Garycki v. Poland* գործով 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02, 66-րդ կետ:

արտահայտությունների հետ<sup>7</sup> շեշտադրելով վերջիններիս կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով չմեղադրված և չդատապարտված անձանց մասին<sup>8</sup>:

18. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի) 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտնող դատավճռով: (...)»:

19. Անմեղության կանխավարկածի սկզբունքի վերաբերյալ սահմանադրաիրավական և քրեադատավարական վերոնշյալ նորմերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն *Արմեն Բաղդասարյանի* գործով արձանագրել է, որ հանցագործության կատարման մեջ կասկածվողի կամ մեղադրվողի մեղքն ապացուցված կարող է համարվել միայն դատարանի՝ օրենքով սահմանված կարգով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այլ խոսքով՝ կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորությունը կարելի է հաստատված համարել միայն այն դեպքում, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ<sup>9</sup>:

19.1. Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ գործնականում անմեղության կանխավարկածը կարող է խախտվել՝ իր բնույթով *ընթացակարգային* և *նյութական* առումներով: Օրինակ՝ ընթացքի մեջ գտնվող վարույթի շրջանակներում անձի անմեղության կանխավարկածը խախտող հայտարարություններ անելը, որը չի ազդում գործով վերջնական որոշման կայացման վրա, անմեղության կանխավարկածի *ընթացակարգային* խախտում է: Մինչդեռ, անմեղության կանխավարկածի այնպիսի խախտումները, որոնք պաշտպանության

<sup>7</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Allenet de Ribemont v. France* գործով 1996 թվականի օգոստոսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, 35-36-րդ կետեր, *Nesták v. Slovakia* գործով 2007 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 65559/01, 88-րդ կետ:

<sup>8</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Daktaras v. Lithuania* գործով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, 41-րդ կետ:

<sup>9</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արմեն Բաղդասարյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԳ/0009/11/13 որոշման 14-րդ կետը:

կողմի ապացույցների անտեսմամբ, ազդում են դատական ակտի կամ այլ վերջնական որոշման բովանդակության վրա, իրենց բնույթով *նյութական* են<sup>10</sup>:

20. ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Գաբարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խախտանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

*1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.*

*2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.*

*3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.*

*4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պարիժը կրելուց.*

*5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը: (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝

*«8. Եթե կասկածյալը կամ մեղադրյալը կատարել է սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, ապա գրավը պետության եկամուտ է դարձվում դատարանի որոշմամբ՝ դատախազի միջնորդության հիման վրա, իսկ քրեական գործը դատարանում քննելիս՝ նաև դատարանի նախաձեռնությամբ: Գրավը պետության եկամուտ դարձնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան:*

<sup>10</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սեդրակ Քոչարյանի* գործով 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ԵԳ/0112/11/19 որոշման 14-րդ կետը, Amal Clooney, Philippa Webb, *The Right to a Fair Trial in International Law*, Oxford University Press (2020) էջ 249:

9. *Գրավը վերադարձվում է գրավարուին այն դեպքերում, երբ չի ապացուցվել սույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու հանգամանքը, կամ գրավը՝ որպես խափանման միջոց, վերացվել կամ փոխվել է: Գրավը վերադարձնելու մասին որոշումն ընդունում է քրեական վարույթն իրականացնող մարմինը՝ համապատասխան խափանման միջոցը վերացնելու կամ փոխելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ (...):»:*

21. Վճռաբեկ դատարանը, համալիր վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով և 143-րդ հոդվածի 8-9-րդ կետերով նախատեսված կարգավորումները, *Առուշ Առուշանյանի* վերաբերյալ գործով արձանագել է, որ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մյուս հիմքերի, գրավը պետության եկամուտ դարձնելու համատեքստում, դատարանի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հանգամանքը կարող է ապացուցված համարվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, իսկ քրեական գործի քննության փուլում գրավը պետության եկամուտ դարձնելու հարցը ենթակա է լուծման վերջնական դատական ակտով, հակառակ պարագայում վարույթն իրականացնող մարմնի՝ տվյալ դեպքում դատարանի գործողությունները ինքնին կհանգեցնեն անձի անմեղության կանխավարկածի խախտման:

Վերոնշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է նաև, որ ստորադաս դատարանների հետևություններն առ այն, որ անձն իր նկատմամբ որպես խափանման միջոց գրավ ընտրված լինելու պայմաններում ենթադրաբար կատարել է քրեական օրենքով չթույլատրված նոր արարք, իրավաչափ չէ, քանի որ անձի նկատմամբ մեղադրանք առաջադրած լինելը և քրեական գործը դատարանի վարույթում գտնվելը դեռևս չի կարող հաստատված համարել անձի կողմից այդ գործով իրեն մեղսագրվող արարքների կատարման փաստը:

Վճռաբեկ դատարանը, համեմատական վերլուծության ենթարկելով 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված գրավը պետության եկամուտ դարձնելու

հիմքերն, արձանագրել է, որ ի տարբերություն 2020 թվականի ապրիլի 14-ի խմբագրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը մեղադրյալի կողմից մեկ այլ հանցանք կատարելը չի նախատեսել գրավը պետության եկամուտ դարձնելու հիմք՝ դրանով իսկ բացառելով վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի անմեղության կանխավարկածի խախտումը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերը և գրավը պետության եկամուտ դարձնելու հիմքերը նույնական են, մինչդեռ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գրավը պետության եկամուտ է դառնում եթե 1) մեղադրյալը թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից, 2) պարբերաբար չի ներկայացել վարույթն իրականացնող մարմնի հրավերով կամ 3) էապես խոչընդոտել է վարույթին, ուստի նշված հիմքերը չեն նույնանում 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերին<sup>11</sup>:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

-Նախաքննության մարմնի կողմից թիվ 37154520 քրեական գործով 2020 թվականի օգոստոսի 12-ին Մ.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ 2020 թվականի օգոստոսի 15-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել 4.500.000 ՀՀ դրամի չափով գրավը<sup>12</sup>,

- 2021 թվականի հուլիսի 2-ին ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ

<sup>11</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Սուրջ Սոուշալյաի* գործով 2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԳ/0043/01/2 որոշումը:

<sup>12</sup> Տե՛ս գործի նյութեր, հատոր 1, թերթեր 10-16:



37157821 քրեական գործը, այնուհետև նշված քրեական գործին է միացվել է թիվ 37154520 քրեական գործը<sup>13</sup>,

- Առաջին ատյանի դատարանի որոշմամբ՝ Դատախազի 2021 թվականի օգոստոսի 23-ի միջնորդությունը՝ թիվ 37157821 քրեական գործով մեղադրյալ Մ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված գրավը պետության եկամուտ դարձնելու մասին, մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Մ.Հարությունյանը դատարանի կողմից 2020 թվականի օգոստոսի 15-ին իր նկատմամբ որպես խափանման միջոց գրավը կիրառված լինելու պայմաններում 2021 թվականի հուլիսի 2-ին առերևույթ կատարել է նոր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հանցանք, սակայն մեղադրյալ Մ.Հարությունյանի կողմից տվյալ արարքը կատարելու վերաբերյալ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ, ուստի մեղադրյալի կողմից չթույլատրված արարքի կատարումը չի կարող համարվել հաստատված հանգամանք կամ փաստ, քանի որ այդ պարագայում կխախտվի անձի անմեղության կանխավարկածը<sup>14</sup>,

- Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է, որ օրենքը որևէ տարբերակում չի նախատեսում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-ի հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների միջև, և դրանցից ցանկացածը կատարելու պարագայում գրավը պետության եկամուտ է դարձվում դատարանի որոշմամբ՝ դատախազի միջնորդության հիման վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-ի հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է՝ «քրեական օրենքով չթույլատրված արարք» ձևակերպումը, որը երբևէ չպետք է նույնացվի «հանցանք» կամ «հանցագործություն» հասկացությունների հետ: Այս համատեքստում Առաջին ատյանի դատարանի մոտեցումը իրավաչափ համարվել չի կարող և խաթարում է քննարկվող խափանման միջոցի կիրառման և մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու պարագայում՝ համապատասխան բացասական հետևանքների առաջացման ինստիտուտի էությունը և բովանդակությունը<sup>15</sup>:

<sup>13</sup> Տե՛ս նյութեր, հատոր 1, թերթեր 6-9:

<sup>14</sup> Տե՛ս մանրամասն սույն որոշման 13-րդ կետը:

<sup>15</sup> Տե՛ս մանրամասն սույն որոշման 14-րդ կետը:

23. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 17-21-րդ կետերում վկայակոչված իրավական նորմերի և շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ օրենքը որևէ տարբերակում չի նախատեսում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-ի հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների միջև և դրանցից ցանկացածը կատարելու պարագայում գրավը պետության եկամուտ է դարձվում դատարանի որոշմամբ, իրավաչափ չէ, քանի որ Մ.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրանք առաջադրած լինելը չի կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու Մ.Հարությունյանի կողմից այդ գործով իրեն մեղսագրվող արարքների կատարման փաստը: Հետևաբար Մ.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով մեղադրանք առաջադրած լինելու փաստը, որպես քրեական օրենքով չթույլատրված նոր արարքի կատարումը հաստատող հանգամանք դիտարկելը և այդ հիմքով գրավը պետության եկամուտ դարձնելը հանգեցրել է Մ.Հարությունյանի անմեղության կախվարկածի խախտման:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ դատարանի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու հանգամանքը, գրավը պետության եկամուտ դարձնելու համատեքստում, կարող է ապացուցված համարվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով, իսկ քրեական գործի քննության փուլում գրավը պետության եկամուտ դարձնելու հարցը լուծման է ենթակա միայն եզրափակիչ դատական ակտով:

24. Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարույթով Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի պահանջների խախտում, որն իր բնույթով էական է, և Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 419-րդ հոդվածների համաձայն, բեկանելու Վերաքննիչ դատարանի 2022 թվականի հունվարի 17-ի որոշումը:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ և կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361<sup>1</sup>-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԱՎԴ/0014/15/21 գործով մեղադրյալ Մուրադ Մարութի Հարությունյանի պաշտպաններ Կ.Մեծլույսյանի և Է.Բեգլարյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2022 թվականի հունվարի 17-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝	_____ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ
Դատավորներ՝	_____ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ
	_____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ
	_____ Ս.ՉԻՉՈՅԱՆ
	_____ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ